Կարծիք

Մարթա Էդուարդի Մելիքսեթյանի «Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու քրեաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները» թեմայով ԺԲ. 00. 05 «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Քննարկվող ատենախոսական աշխատանքը նվիրված է ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված, ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված թվով 14 հանցագործություններից մեկին, այն է՝ ծնողի, այլ օրինական ներկայացուցչի կամ այլ անձի կողմից, որի վրա երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականություն է դրված, այդ պարտականությունը չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն, որն հանգեցրել է երեխայի առողջության վատթարացմանը, ինչպես նաև զուգորդվել է անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով կամ որն անզգուշությամբ առաջացրել է երեխայի առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք:

Գրախոսվող աշխատանքի ներածության մեջ հեղինակին հաջողվել է հիմնավորել թեմայի արդիականությունը՝ պայմանավորված ընտանիքի և երեխայի շահերի առավել ընդգրկուն և արդյունավետ պաշտպանության, այդ թվում՝ ընտանիքի և երեխայի շահերի քրեաիրավական պաշտպանության, երեխայի լավագույն շահի ապահովման անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով նաև 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգրքի նորովի իրավակարգավորումների գիտագործնական և տեսաիրավական լուծումների անհրաժեշտությունը, վերջին տարիներին անչափահասների նկատմամբ կատարված հանցագործությունների թվաքանակի կրկնակի աճը, այդ թվում և անչափահաս տուժողի ընտանիքի անդամների կողմից վերջինիս նկատմամբ կատարված հանցագործությունների ավելի քան 40 % աճը:

Ատենախոսական աշխատանքի բաղկացուցիչներն են երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու քրեաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները, մասնավորապես՝ կատարվող հանցագործությունների ծնող և նպաստող պատճառներն ու պայմանները վերհանելը և դրանց արդյունքում համապատասխան առաջարկություններով նպաստելը ինչպես նշված բնույթի հանցագործությունների բացահայտմանը, պատշաճ քննությանը և արարքի ճիշտ որակմանը, այնպես էլ դրանց ժամանակին և արդյունավետ կանխարգելմանը:

Հետազոտության նպատակն է ծնողի, կամ օրենքով նախատեսված այլ անձանց կողմից երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու քրեաիրավական և քրեաբանական ուսումնասիրությունն ու վերլուծությունը և տվյալ հանցատեսակի դեմ արդյունավետ պայքարի և կանխարգելման միջոցների մշակումը՝ քրեաիրավական և քրեաբանական ասպեկտների համակարգային հետազոտության հիման վրա: Ատենախոսության նպատակով պայմանավորված սահմանվել են թվով 6 գիտագործնական խնդիրներ:

Ատենախոսության ընդհանուր բնութագրում ներկայացվել է նաև թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտն ու առարկան, տեսաիրավական, փորձարարական և մեթոդաբանական հիմքերը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Առանձնակի ուշադրության է արժանի հետազոտության գիտական նորույթը՝ որպես տվյալ հանցակազմի քրեաիրավական և քրեաբանական համալիր վերլուծության առաջին փորձ, և պաշտպանության ներկայացվող դրույթները՝ որպես գիտական նոր մոտեցումների ներդրման նպատակով ներկայացված տեսական և գործնական առաջարկներ՝ կապված ինչպես քննարկվող բլանկետային հանցակազմի, այնպես էլ նրան առնչվող իրավունքի այլ ճյուղերով կարգավորվող նորմերի հետ:

Ատենախոսության առաջին գլխում (էջեր 15-82) հեղինակի կողմից ուսումնասիրվել է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հանցակազմի քրեաիրավական բնույթը,

մասնավորապես՝ երեխայի նորմալ ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական զարգացումը՝ որպես քրեաիրավական պաշտպանության օբյեկտ, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված, քննարկվող հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները:

Ատենախոսության երկրորդ գլխում (էջ 82-100) ուսումնասիրվել է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ հանցակազմի կիրառման պրակտիկայի կատարելագործումը, ինչպես նաև տվյալ հանցակազմի կանոնակարգումը արտասահմանյան երկրներում:

Ատենախոսության երրորդ գլխում (100-128) ուսումնասիրվել և պարզաբանվել են երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելուն նպաստող պատճառներն ու պայմանները, ինչպես նաև դրանց կանխարգելման միջոցներն ու դրանց կատարելագործումը:

Ատենախոսության եզրակացության մեջ ամփոփվել են կատարված ուսումնասիրության արդյունքները՝ եզրահանգումների և առաջարկությունների տեսքով, որոնց մի մասն ունեն ինչպես գիտական, այնպես էլ գործնական առարկայական նշանակություն, ինչը թույլ է տալիս ատենախոսության մասին կազմել դրական կարծիք:

Ատենախոսական աշխատանքի ուսումնասիրման արդյունքում կարելի է եզրակացնել, որ հեղինակը, ընդհանուր առմամբ, լուծել է իր առջև դրված խնդիրները՝ քրեական նոր օրենսդրության լույսի ներքո համակարգված վերլուծության է ենթարկել երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հանցագործության քրեաիրավական և կրիմինոլոգիական բնութագրական առանձնահատկությունները, և առկա տեսական և կիրառական խնդիրներին տվել համարժեք լուծումներ:

Հեղինակն անդրադարձել է գնահատողական կատեգորիա հասկացության և իրավական որոշակիության սկզբունքի հարաբերակցության խնդիրներին և դրա հետ կապված ՍԴ և Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներին՝ փորձելով բացահայտել քննարկվող հանցակազմում առկա այնպիսի գնահատողական հասկացություններ,

ինչպիսիք են **երեխայի առողջության վատթարացումը և անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքը**, որն ողջունելի է:

Քննարկվող հոդվածի համատեքստում հեղինակն անդրադարձել է նաև ընտանեկան և կենցաղային բռնության այնպիսի տեսակներին, ինչպիսիք են՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական, տնտեսական բռնությունները, անտեսումը և դրանց դրսևորումները՝ գտնելով, որ դրանք ըստ էության հանդիսանում են երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու եղանակներ:

Քննարկվող հանցակազմի շրջանակներում հեղինակը ծավալուն տեղ է հատկացրել նաև մեղքի ինստիտուտին, հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներին՝ եզրակացնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ, իսկ օբյեկտիվ կողմը՝ գործողությամբ կամ անգործությամբ:

Հեղինակը մանրամասնորեն անդրադարձել է նաև քննարկվող և դրան հարակից և նմանատիպ հանցագործությունների սահմանազատմանը՝ այն համարելով արարքի ճիշտ որակման կարևոր պայմաններից մեկը:

Ընդհանուր առմամբ, դրական գնահատելով կատարված աշխատանքը, ունեմ որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Երեխային ծնողից վերցնելու հարցում ոստիկանության ծառայողներին լիազորություն տալը, ինչպես նաև այդ հիմքով միջգերատեսչական համագործակցության տարբեր մեխանիզմների մշակումը գիտական նորույթ համարելը ճիշտ չէ, հետևաբար պաշտպանության ներկայացված 6-րդ դրույթը պետք է համարել առաջարկություն կամ կարծիք:

2. Չնայած աշխատանքում օգտագործված զգալի գրականությանը և թեմայի վերաբերյալ ներկայացված իրավական դիրքորոշումներին, այնուհանդերձ հարկ է նշել, որ հայ հեղինակներ Դ. Ա. Թումասյանի, Ա. Ռ. Մարգարյանի, Ն. Ռ. Տոնոյանի, Հ. Մ. Խաչատրյանի և մյուսների աշխատությունները հետազոտելն ու աշխատանքում

վկայակոչելը՝ այն համադրելով սեփական դիրքորոշման հետ, առավել բովանդակային կդարձներ նյութի գիտական բաղադրիչը և գիտական մշակվածության աստիճանը:

3. Պարզվել է, որ միայն 2023 և 2024 թվականների ընթացքում անչափահասների նկատմամբ կատարված ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ նախաձեռնված թվով 755 քրեական վարույթներից 38-ը քննվել են ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով (2023 թ.՝ 13, 2024 թ.՝ 25), որոնց վարույթները կարճվել են և որևէ գործով մեղադրական դատավճիռ չի կայացվել, որն անշուշտ մտահոգիչ է: Կարծում եմ, աշխատանքը զգալիորեն շահած կլիներ, եթե ատենախոսի կողմից հետազոտման և վերլուծության ենթարկվեր նշված վարույթներով կայացված որոշումները և ներկայացվեր դիրքորոշում դրանց հիմնավոր կամ անհիմն լինելու մասին՝ հիմքում ունենալով այն գաղափարը, որ երեխային դաստիարակելու պարտականությունը պատշաճ կատարելը հարաբերական և գնահատողական կատեգորիա է, որը կարող է գործնականում խնդիրներ առաջացնել, քանի որ դաստիարակելու պարտականությունը պատշաճ կամ ոչ պատշաճ կատարելը պետք է որոշվի՝ հաշվի առնելով բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, այդ թվում՝ ընտանիքի սոցիալական նյութական վիճակը, ընտանիքի կազմը, սովորույթներն ու առանձնահատկությունները, բնակության վայրը, միջավայրն ու «փողոցային դաստիարակությունը» և այլն: Հատկապես վերջինիս բացասական ազդեցությունը կարող է չեզոքացնել ծնողի դաստիարակությունը և նման հանգամանքը չգիտակցելը և չբացահայտելը կարող է հանգեցնել անձի անհիմն մեղադրման, հանգամանք, որը չպետք է որևէ պարագայում անտեսվի:

4. Աշխատանքում առաջարկվել է արարքը, որն անզգուշորեն առաջացրել է երեխայի մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ հանգեցրել է այլ ծանր հետևանքի, համարել հանցագործությունը առավել ծանրացնող հանգամանք և ամրագրել այն հոդվածի նոր՝ 3-րդ մասով: Առաջարկն վիճահարույց է և լրացուցիչ պարզաբանման կարիք ունի: Նման պայմաններում դժվար է ասել, թե ինչու, օրինակ, ՀՀ քր. օրենսգրքի 248-րդ հոդվածով սահմանված երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե դրա հետևանքով

երեխայի առողջությանը անզգուշությամբ պատճառվել է միջին ծանրության վնաս՝ ենթակա է որակման 248-րդ հոդվածի առաջին մասով, իսկ դաստիարակության կամ խնամքի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում նույն՝ անզգուշությամբ միջին ծանրության վնաս պատճառելը պետք է որակվի քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի 3-րդ մասով՝ որպես առանձնապես ծանրացնող հանգամանք, այն դեպքում, երբ ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ, այնպես էլ քր. օրենսգրքի 248-րդ հոդվածներով սահմանված հանցագործությունների օբյեկտը երեխայի նորմալ ֆիզիկական, հոգեկան, սոցիալական զարգացումն ապահովող հասարակական հարաբերություններն են, իսկ վերջին դեպքում՝ նաև որպես լրացուցիչ օբյեկտ հանդես է գալիս երեխայի կյանքի անվտանգության ապահովմանն ու առողջության պահպանմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

5. Ատենախոսը արարքի որակման շրջանակներում նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցանքը կարող է կատարվել ցանկացած շարժառիթով: Միաժամանակ, որպես շարժառիթներ են նշվել նաև դաստիարակության մեթոդը, անչափահասին ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելու ցանկությունը, մինչդեռ դաստիարակության մեթոդը, ինչպես նաև ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելու ցանկությունը իրենց հիմքում ունեն արարքով, մասնավորապես՝ կատարման եղանակով և այլ հանգամանքներով պայմանավորված օբյեկտիվ հատկանիշներ, ինչպես օրինակ՝ խոշտանգումը, տանջանքը, կտտանքը, անարգանքը, ծաղրուծանակը, սադիզմը, դաժան վերաբերմունքը, առանձին դաժանությունը և չեն կարող համարվել շարժառիթներ: Ցանկանալը վտանգավոր հետևանքների առաջացման ձգտումն է, այն հետևանքի նկատմամբ դրսևորվող վերաբերմունքն է: Հանցագործության դեպքում հանցավորի ցանկությունը կարող է առաջանալ տարբեր շարժառիթների հետևանքով, այսինքն՝ շարժառիթը և ցանկությունը չեն նույնանում: Շարժառիթը մշտապես նախորդում է մեղքի դրսևորմանը: Շարժառիթը ծնվում է պահանջմունքներից և որոշակի կերպով նպաստում է նպատակի ձևավորմանը, իսկ նպատակը շարժառիթի հետ միասին ծնում է ցանկություն որոշակի եղանակով հասնելու ցանկալի արդյունքի:

Նշված նկատառումներն ամբողջության մեջ չեն ազդում գրախոսվող աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի վրա և բխում են այն առավել լավը տեսնելու ցանկությունից:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Ատենախոսական աշխատանքն իրականացվել է Հայ-Ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնում, որտեղ կազմակերպվել է նաև ատենախոսության նախնական քննարկումը և գրախոսումը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի կողմից հրապարակած 7 գիտական հոդվածներում:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում եմ, որ Մարթա Էդուարդի Մելիքսեթյանի «Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու քրեաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները» թեմայով ԺԲ. 00. 05 մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող ինքնուրույն, ավարտուն հետազոտություն է, որը համապատասխանում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի կանոնակարգի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

պաշտոնական ընդդիմախոս՝
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ա. Ա. Թամազյան

պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա. Ա. Թամազյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար՝ բ. գ. թ.
Ռ. Ս. Կասաբաբովա